ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի և «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքված ՎԱՇՎՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/7-2 ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ ստորև ներկայացնում եմ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

ՀՀ կառավարությանը ենթակա շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ վարչապետի աշխատակազմի և «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ի միջև 03.11.2023թ. կնքվել է ՎԱՇՎՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/7-2 ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիր: Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո պայմանագրի շրջանակերում կողմերի միջև 16.02.2024թ. կնքվել է համաձայնագիր:

Պայմանագրի 1.1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը (տվյալ դեպքում՝ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ն) պարտավորվել է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված ապրանքները (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 12.11.2024թ., սակայն սահմանված ժամկետում ապրանքները չեն մատակարարվել:

Գնման գործընթացի պատասխանատու ստորաբաժանում հանդիսացող շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 11.12.2024թ. թիվ 01//2478-2024 գրության

համաձայն (կցվում է)՝ վերջինս 05.12.2024թ. գրությամբ դիմել է Ընկերությանը՝ պահանջելով եռօրյա ժամկետում մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները, և նշելով, որ հակառակ դեպքում Պայմանագրի 2.1.7 կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն Պայմանագիրը միակողմանի կլուծվի և կկիրառվեն Օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները: Ընկերության կողմից նշված ծանուցմանը պատասխան չի ստացվել: Փաստացի, Ընկերությունը հրաժարվել է մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***15 օրից ավելի***:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ չիրականացնելով պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարումը, վարչապետի աշխատակազմը՝ հիմք ընդունելով վերը նշված իրավական հիմքերը, միակողմանի հրաժարվել է 03.11.2023թ. Ընկերության հետ կնքված ՎԱՇՎՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/7-2 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրից՝ համարելով այն ամբողջությամբ լուծված:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** *կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և* ***մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:***

Ընդ որում, ՎԱՇՎՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/7-2 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.15 կետի համաձայն՝ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի,

պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Միաժամանակ հայտնում եմ, որ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին ուղղված 17.12.2024թ. թիվ 17/17.4/43512-2024 գրություն-ծանուցմամբ վարչապետի աշխատակազմն ապահովել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ առկա են «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ սահմանված հիմքերը և որոշում եմ՝ Ընկերությանը ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ